

**Title:** Interference with the professional activities of a journalist

Խոչընդոտվել է լրագրողի մասնագիտական գործունեությունը

**Details:** In 2015, the Special Investigation Service began investigating a case of interference with the professional activities of 11 journalists. Since then, the journalists have been waiting for justice, so that the persons who prevented the journalists from doing their jobs will answer for their actions.

Երկու հազար տասնհինգ թվականին Հատուկ Քննչական ծառահույժությունը հարուցեց քրեական գործ ՀՀ-ում տասներեք լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու հիմքով: Հարուցված քրեական գործից հետո լրագրողները սպասում են, որ արդարությունը կվերականգվի և պատասխանատվության առաջ կկանգնեն մարդիկ, ովքեր խոչընդոտել են լրագրողներին՝ կատարել պարտականությունները:

**Dateline:**

Gyumri, Armenia - 23/06/17

**Story Number:** N/A

**Source:** Gala TV, [www.gala.tv.am](http://www.gala.tv.am)

[www.openmediahub.com](http://www.openmediahub.com)

*“This production was supported by OPEN Media Hub with funds provided by the European Union”*

**Restrictions:** None

**Filed:** 25/06/2017

\*\*\*\*\*

**1/ Story Pitch:**

In 2015, the Special Investigation Service began investigating a case of interference with the professional activities of 11 journalists. Since then, the journalists have been waiting for justice, so that the persons who prevented the journalists from doing their jobs will answer for their actions.

# OPEN MEDIA HUB

Supporting media professionals across the EU Neighbourhood area

Երկու հազար տասնհինգ թվականին Հատուկ Քննչական ծառայությունը հարուցեց քրեական գործ ՀՀ-ում տասներեք լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու հիմքով: Հարուցված քրեական գործից հետո լրագրողները սպասում են, որ արդարությունը կվերականգվի և պատասխանատվության առաջ կկանգնեն մարդիկ, ովքեր խոչընդոտել են լրագրողներին՝ կատարել պարտականությունները:

## 2/ Shot list:

## 3/ Script:

Police officers have interfered with the professional activities of a journalist and used violence against him. The Special Investigation Service began investigating this case back in 2015 when protesters blocked Baghramyan Avenue.

Paylak Fahradyan. “A protest march from Azatutyun Square toward Baghramyan Avenue began on June 23. However, police blocked the road and prevented the citizens from reaching Bagramyan 26, the residence of [President] Serzh Sargsyan.

I was standing right here. You can see in the footage that we were here, the journalists, many cameras were filming from here. Plainclothes police officers were standing behind us. When they turned on the water cannons, and the protesters remained seated, they began to surround us”.

Along with 13 other journalists, Paylak Fahradyan was taken to the police station. He says that the order for his detention was given by then-Head of Police Ashot Karapetyan. There is a recording to prove this. It was turned over to law enforcement. The case also includes video where one can see the faces of the plainclothes officers using violence.

Paylak Fahradyan: “Ashot Karapetyan was head of police at the time. You can hear his voice. Here I speak to him, when they try for the second time to take me to the station. I ask him, Mr Karapetyan, what’s going on, they are beating up journalists and arresting. We can hear him saying something that’s in the recording, he says “take him away”, and after this they use brutal force to push me into the police car.

To learn about progress in his case, he goes to the office where lawyer Nikolay Baghdasaryan works.

Paylak Fahradyan: “Mr Baghdasaryan, I would like to know the news about my case”.

# OPEN MEDIA HUB

Supporting media professionals across the EU Neighbourhood area

The lawyer doesn't even remember where he put the folder with Paylak's case, because he hasn't opened it for seven months. The case won't be solved, he explains, because it is political.

Nikolay Baghdasaryan: An expertise was appointed in your case, and its results are still unknown. Every case that has political implications also includes political explanations of why they are unable to solve it. It is necessary that officials responsible for it resign, this is the normal practice in normal countries. It means that as long as the head of police is the same person, there can be no objective investigation”.

The number of abuses against journalists in Armenia is not going down. The reason is politics, Even though courts are formally independent, and Armenia has signed numerous European conventions, nevertheless, law enforcement bodies do the bidding of the authorities.

Ոստիկանները խոչընդոտել են լրագրողի մասնագիտական գործունեությունը՝ նրա նկատմամբ բռնություններ գործադրելով: Հատուկ քննչական ծառայությունը նման հատկանիշներով քրեական գործ էր հարուցել դեռ երկու հազար տասնհինգ թվականին, երբ ցուցարարները փակել էին Բաղրամյան պողոտան:

Փալլակ Ֆահրադյան. «Հունիսի քսաներկուսից սկսվեց բողոքի երթ Ազատության հրապարակից դեպի Բաղրամյան քսանվեց: Սակայն ոստիկանները փակեցին ճանապարհը՝ թույլ չտալով քաղաքացիներին հասնել Բաղրամյան քսանվեց, որտեղ Սերժ Սարգսյանի նստավայրն է:

Ես կոնկրետ կանգնել եմ հենց այստեղ: Կադրերում էլ կա, որ մենք այստեղ էինք՝ լրագրողներով, բազմաթիվ տեսախցիկներ էին այս կողմից աշխատում: Իսկ ոստիկանները, ովքեր քաղաքացիական հագուստով էին, իրենք գտնվում են թիկունքում: Երբ որ շրջան մեքենան գործի դրվեց և ցուցարարները մնացին իրենց տեղում նստած, նրանք սկսեցին շրջափակել»:

Տասներեք լրագրողների թվում Փալլակ Ֆահրադյանին ևս բերման են ենթարկել ոստիկանություն: Պատմում է, որ իրեն բերման ենթարկելու հրաման տվել է Երևանի այն ժամանակ ոստիկանապետ Աշոտ Կարապետյանը: Սա հաստատող ձայնագրություն կա: Ներկայացրել են իրավապահներին: Գործին կցված են նաև տեսանյութեր, որտեղ երևում են, թե ովքեր են բռնություններ գործադրող քաղաքացիական հագուստով ոստիկանների դեմքերը:

Փալլակ Ֆահրադյան.«Երևանի ոստիկանապետն այն ժամանակ Աշոտ Կարապետյանն էր: Նրա ձայնն է լսելի: Ես դիմում եմ այնտեղ իրեն, երբ ինձ փորձում են երկրորդ անգամ բերման ենթարկել: Նրան հարցնում եմ, թե պարոն Կարապետյան, այս ինչ է կատարվում, լրագրողներին են ծեծում, լրագրողներին են բերման ենթարկում, և իր կողմից լսվում է հետևյալ արտահայտությունը, որը ֆիքսված է, նա ասում է՝ «տարեք դրան» արտահայտությունը և դրանից հետո ինձ բռնի ուժով նստեցնում են ոստիկանական ավտոմեքենա»:

# OPEN MEDIA HUB

Supporting media professionals across the EU Neighbourhood area

Ամեն անգամ նորություն իմանալու ակնկալիքով լրագրողը գալիս է գրասենյակ, որտեղ աշխատում է փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը:

Փայլակ Փահրադյան. «Պարոն Բաղդասարյան, ուզում եմ իմանալ, ինչ նորություն կա իմ գործից»:

Փաստաբանն արդեն չի էլ հիշում, թե որ մասում է Փայլակի գործով թղթապանակը, վերջին անգամ յոթ ամիս առաջ են բացել: Գործը չի բացահայտվի, որովհետև քաղաքական է, բացատրում է նա:

Նիկոլայ Բաղդասարյան. Ձեր գործով նշանակվել է փորձաքննություն և դեռևս փորձաքննության պատասխանները հայտնի չեն:

Ցանկացած քաղաքական ենթատեքստ ունեցող գործ ունենում է նաև քաղաքական որոշակի հիմնավորումներ, թե ինչու չեն կարողանում բացահայտել այդ հանցագործությունը: Պետք է, որպեսզի պատասխանատու անձինք հրաժարականներ տան, դա նորմալ պետություններում նորմալ ընթացք է: Այսինքն, չի կարող ոստիկանապետը մնալ նույնը և այդ գործն օբյեկտիվ քննություն կատարվի »:

Լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու դեպքերը Հայաստանում չեն նվազում: Պատճառը քաղաքական է. թեև դատարաններն օրենքով անկախ են և Հայաստանն էլ մասնակից է դարձել եվրոպական բազմաթիվ կոնվենցիաների ստորագրմանը, այնուամենայնիվ, իրավապահ մարմինները գործում են բարձրագույն իշխանությունների թելադրանքով: